# Ընդունելություն Մոսկվայում Հայաստանի մշտական ներկայացուցչությունում

Երեկ, մայիսի 28-ին ժամը 18-ին, Մոսկվայում, Հայաստանի մշտական ներկայացուցչության շենքում տեղի ունեցած ընդունելությունը նվիրված էր Հայաստանի անկախության օրվան:

Հայաստանի կառավարության մշտական ներկայացուցիչ պրն. Ֆելիքս Մամիկոնյանը ներկայացնելով երեկոյի ծրագիրը, հայտնեց, որ այն պետք է կրի հանդիպում-զրույցների բնույթ, իսկ վերջում կտրվի համերգ:

Ընդունելությանը հրավիրված էին Մոսկվայում հավատարմագրված 51 երկրների դեսպաններ, ԽՍՀՄ եւ ՌՍՖՍՀ ժողպատգամավորներ, հասարակական, քաղաքական առաջադեմ գործիչներ, միութենական ինքնիշխան հանրապետությունների մշտական ներկայացուցիչներ, Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավորներից Անահիտ Բայանդուրը, Խոսրով Հարությունյանը, Կարեն Ծուզբաշյանը:

Ներկայացուցչության ճեմասրահում ցուցադրում էին Ս. Մալյանի քանդակագործական աշխատանքները:

Առանձին ցուցափեղկերում դրված էին նաեւ Հայաստանի Հանրապետության եռագույն դրոշը, զինանշանը եւ 1918-20 թվականներին թողարկված թղթադրամների նմուշներ:

սեփ. թղթ.